

ՀՀ Գեղարքունիքի մարզպետ Կարեն Սարգսյանի շնորհավորանքի խոսքը Ազգային անվտանգության աշխատողի օրվա առթիվ 20.12.2021

Ազգային անվտանգության հարգելի՛ աշխատողներ,

Շնորհավորում եմ ձեզ մասնագիտական տոնի կապակցությամբ:

Այս օրը ևս մեկ առիթ է արժևորելու և գնահատելու մեր երկրի անվտանգության
աշխատակիցների աշխատանքն ու գործունեությունը՝ ուղղված հայրենիքի անվտանգության
ապահովմանն ու ամրապնդմանը:

Ազգային անվտանգության ծառայությունը մեր պետականության անվտանգ գոյության
ապահովման կարևորագույն կառույցներից է, և մենք բարձր ենք գնահատում ձեր դերն ու
նշանակությունն այդ առաքելության իրականացման գործում:

Հայաստանի Ազգային անվտանգության ծառայությունը այսօր առավել քան երբևէ պատվով և մեծ
հաջողությամբ է իրականացնում իր առջև դրված խնդիրները՝ ժամանակին արձագանքելով
ներքին և արտաքին սպառնալիքներին, մեր երկրի առջև ծառայող տարաբնույթ
մարտահրավերներին:

Կրկին շնորհավորում եմ ձեզ և մաղթում հաջողություններ ու ձեռքբերումներ՝ ի շահ մեր
ժողովրդի և հանուն Հայաստանի Հանրապետության անվտանգությունն ապահովելու վեհ գործի: